

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

200\_թ.

\_\_\_\_\_ հիման վրա (այսուհետև՝ ՆԵՐԴՐՈՂ), մի կողմից և \_\_\_\_\_, բնակվող \_\_\_\_\_ շրջանի \_\_\_\_\_ գյուղում (այսուհետև՝ ՄԱՍՆԱԿԻՑ) մյուս կողմից, Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպության ««Երկիր» հիմնադրամ» ծրագրի շրջանակներում կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանագրով ՆԵՐԴՐՈՂԸ պարտավորվում է ՄԱՍՆԱԿԻՑԻՆ տրամադրել \_\_\_\_\_ հատ \_\_\_\_\_ մեղվաընտանիքներ \_\_\_\_\_ ընդհանուր արժեքով, իսկ ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավորվում է ընդունել նշված մեղվաընտանիքները և օգտագործել սույն պայմանագրում նշված նպատակներին հասնելու համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՆԵՐԴՐՈՂԸ պարտավորվում է.

2.1.1. ՄԱՍՆԱԿԻՑԻՆ տրամադրել սարքին վիճակում մեղվափեթակներ և առողջ մեղվաընտանիքներ:

2.1.2. ՄԱՍՆԱԿԻՑԻ կողմից բարեխիղճ կերպով իր պարտականությունների կատարման դեպքում երկարացնել պայմանագրի գործողության ժամկետը ևս մեկ տարով:

2.2. ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավորվում է.

2.2.1. ՆԵՐԴՐՈՂԻ տրամադրած մեղվաընտանիքները պահել բարեխիղճ ձևով, ժամանակին կատարել բուժական բոլոր միջոցառումները:

2.2.2. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր տարի \_\_\_\_\_ կգ մեղր, ինչպես նաև պայմանագրի ժամկետը լրանալուց պայմանագրի առարկա մեղվափեթակները հանձնել ՆԵՐԴՐՈՂԻՆ:

2.2.3. Պայմանագրի առարկա հանդիսացող մեղվաընտանիքները պայմանագրի գործողության ընթացքում գրավ չդնել, չհանձնել այլ կողմի, չվաճառել կամ այլ եղանակով չօտարել առանց ՆԵՐԴՐՈՂԻ համաձայնության:

2.2.4. ՆԵՐԴՐՈՂԻ պահանջով անմիջապես ներկայացնել պայմանագրի առարկայի հետ առնչություն ունեցող բոլոր փաստաթղթերը:

2.2.5. Եռամսյակը մեկ անգամ ՆԵՐԴՐՈՂԻՆ ներկայացնել պայմանագրի մասին հաշվետվություն:

2.2.6. Երրորդ կողմի հետ որևէ համաձայնության գալու դեպքում, որը առնչություն կունենա պայմանագրի առարկայի հետ, հայտնել ՆԵՐԴՐՈՂԻՆ:

2.2.7. Պայմանագրի առարկային վերաբերվող մեղվաընտանիքներին վտանգ սպառնալու և կամ վնասվելու դեպքում անհապաղ հայտնել ՆԵՐԴՐՈՂԻՆ, ընդ որում դա չի ազատում ՄԱՍՆԱԿԻՑԻՆ իր պայմանագրային պարտավորությունների կատարումից, մասնավորապես 2.2.2. կետով նախատեսված:

2.2.8. Սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում շուկայական արժեքով դրամական փոխհատուցում տալ չհանձնված գույքի դիմաց:

### **3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

**3.1 ՆԵՐԴՐՈՂԸ** իրավունք ունի.

3.1.1. Վերահսկել ՄԱՍՆԱԿՑԻ գործողությունները, նաև հրավիրված մասնագետների միջոցով:

3.1.2. Պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ ստուգել կատարվող աշխատանքների ընթացքը:

**3.2. ՄԱՍՆԱԿԻՑԸ** իրավունք ունի.

3.2.1. Իր պայմանագրային պարտավորություններից դուրս ստացած արտադրանքը տնօրինել իր հայեցողությամբ:

3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ կատարել պայմանագրի թիվ 2.2.2. կետով ստացված պարտավորությունները (նշված դեպքում պայմանագիրը համարվում է լուծարված):

3.2.3. Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ լուծարել պայմանագիրը 1.1. կետում նշված մեղվաընտանիքների արժեքի և պայմանագրի ուժի մեջ մտնելու օրից հաշվարկված յուրաքանչյուր օրվա դիմաց 0,1% տուգանքի վճարելով:

### **4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1. Սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում ՄԱՍՆԱԿԻՑԸ պատասխանատվություն է կրում իր ունեցած ամբողջ գույքով:

4.2. ՄԱՍՆԱԿԻՑԸ մեղվաընտանիքները սահմանված ժամկետում չվերադարձնելու դեպքում ՆԵՐԴՐՈՂԻՆ վճարում է տուգանք յուրաքանչյուր ուշացած օրվա համար չվերադարձված մեղվաընտանիքների արժեքի 0,1% - ի չափով:

### **5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

5.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը կարգավորվում են կողմերի բանակցությունների միջոցով, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ գործող օրենսդրության համաձայն:

5.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմի մոտ մեկ օրինակ:

5.3. Մեղվաընտանիքների հանձնում – ընդունումը կատարվում է համապատասխան ակտերով, որոնք կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

### **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՑԸ**

6.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում մեղվաընտանիքների հանձնման - ընդունման պահից:

6.2. Սույն պայմանագիրը կնքվում է երկու տարի ժամկետով:

6.3. Պայմանագիրը կարող է դադարեցվել.

6.3.1. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3.2. Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում:

6.3.3. Սույն պայմանագրի 3.2.2. կետի համաձայն:

6.3.4. Միակողմանի ՆԵՐԴՐՈՂԻ կողմից, եթե ՄԱՍՆԱԿԻՑԸ խախտել է 2.2.1. կետը, ընդ որում ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավոր է վերականգնել ՆԵՐԴՐՈՂԻ կրած վնասները:

6.4. Պայմանագիրը կարող է երկարացվել 2.1.2. կետի համաձայն:

## ԿՈՂՄԵՐ

ՆԵՐԴ ՐՈՂ

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

ՄԱՍՆԱԿԻՑ

\_\_\_\_\_  
անձնագիր \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
(հասցե)  
\_\_\_\_\_